

րախանան կարգ մը արհեստաւորներու հետ, որ վերջապէս Գիւրդեքը զրամ գիզելով քաղաք են եկեր:

Ահա տեղական հանդամանքներու քաղաքական ու տնտեսական դրութեան շահու այս տեսակէտը, մեծ վիճ մը կը բանայ գիւղական երկրագործ և քաղաքացի ժողովրդեան մէկ մասին մէջ, մինչև որ հարստահարութեան չղթայի օգակները երթան կազմել այն մեծ չղթան՝ որ բոլորելով ամենին ի միասին, կաշկանդէ պինդ, ու իր պրկումներէն անոնց հառաչել և գոչել տայ: (*)

(*) Գիւրդե Աշիրաթապետի իրաւական սահմանները գրեթէ ամեն տեղ միեւնոյն են իրենց ընդհանուր գծերուն մէջ. իբր ամիսփում՝ կուտանք Գերջանի 1911 մայիս 10 թղթակցութենէն քաղուած մը ուղղուած «Ազատամարտի» ուր կը շեշտուի աւելի Աշիրադինուրական դրութիւնը:

Շատ հին ժամանակներէ նուիրագործուած է Աշիրութիւնը. տապետութիւնը՝ քիւրդ ազգին մէջ, իւրաքանչիւր անհատ պարտական է իր աշիրէթապետին անպայման հպատակել, կուրօրէն պարտի հնազանդիլ պէտի հրամաններուն՝ իրաւացի կամ անիրաւ. հպատակը պետին զինուորն է մինչև ծերանայ, հիւժի և անկարողութեան մատնուի, անպայման է տակիւ, ոչ մէկ առիթ արդելք չի կրնար ըլլալ Պետը երբ ուրիշ աշիրաթի հետ կուռի բռնուի՝ իսկոյն հրաման կ'արձակէ և բոլոր աշիրի անդամները, ձգած տուն, տեղ, աշխատանք և պարագաները՝ զէնքերնին առաջ կը միանան պետին. ուտելիք ռազմամթերք պետին կը պատկանի, եթէ կուռի մէջ սպանուին՝ ոչ մէկ վարձատրութիւն չիկայ զոհին, քրդական յայտնի երգ մը կը յօրինուի իր քաջ կուռուղ մը ըլլալուն վրայ, իսկ պետը հակառակորդ Աշիրէթէն արեան դէմ արիւն կը պահանջէ կամ կուռով և կամ գիւղ մը իբր վարձք առնելով, Աշիրաթապետը բացաճակ միապէս է իր Աշիրէթին, իրաւունք ունի տեսնել իր ցեղին մէջ բոլոր դատերը, իր ցեղի անդամներէն մէկը երբ ուրիշ ցեղի մը անդամի հետ վէճի բռնուի՝ պետերը կը բանակցին. ցեղային ժողով կը գումարուի (ձէմաթ), այդ ժողովին մէջ կը վճռեն դատը: Պետը ունի իրեն սեպհական հողերը և կալուածները. ամենէն մեծ բաժինը աւան թաւանէն իրեն կը պահէ. քիչ մըն ալ գործողներուն բաժին կը հանէ. պետը որոշ տուրք կ'ստանայ իր աշիրի անդամներէն իւր, ոչխար, ցորեն, դրամ և այլն, որպէս զի իր ծախքերը հոգայ և կուռի համար պաշար և ռազմամթերք հաւաքէ ու պատրաստ պահէ: Պետը կը ստանայ նուէրներ, տասանորդի տուրք, զինուորական տուրք՝ եթէ մէկը պետութեան զինուոր է: Աշիրէթներու մէջ հողը հասարակաց խօցիւն է: